ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 2
1. Մրցույթը 2
2. Նպատակը 3
3. Ժամկետները 3
4. Հայտատուն 4
5. Մենթորը 6
6. Կազմակերպությանը ներկայացվող պահանջները 6
7. Ակնկալվող արդյունքները 7
II. ՀԱՅՏԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 9
8. Հայտ և անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելը 9
9. Նախահաշվի կազմությունը 10
III. ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 12
10. Հայտերի համապատասխանությունը Մրցույթի պայմաններին 12
11. Փորձաքննությունը 13
12. Փորձաքննության առաջին փուլը (ընդարձակ ամփոփագրի գնահատում) 13
13. Փորձաքննության երկրորդ փուլը (Հանձնաժողովի գնահատում) 14
14. Փորձաքննության երկրորդ փուլը (հարցազրույց) 14
15. Գնահատման արդյունքները 14
IV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ 15
16. Պայմանագրերի կնքումը 15
17. Հաշվետվությունը 16
18. Լրացուցիչ տեղեկություններ 17
19. Նախագծի ֆինանսավորման դադարեցումը 18
Հավելված N 2.1 19
Հավելված N 2.2 20
Հավելված N 2.3 21
Հավելված N 2.4 22
Հավելված N 2.5 23

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«13» մարտի 2026 թ.
N 388 -Ա/2 հրամանի

ՀՐԱՎԵՐ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ «POSTDOC-ARMENIA – 2026»» ՄՐՑՈՒՅԹԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մրցույթը

1.1. «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia – 2026»» մրցույթն (այսուհետ՝ **Մրցույթ**) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ **Նախարար**) 2026 թվականի մարտի 13 -ի N 388 - Ա/2 հրամանի:

1.2. **Մրցույթը** կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ **Կոմիտե**)՝ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշման N 3 հավելվածով հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման կարգով»:

1.3. **Մրցույթն** ուղղված է Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2026-2030 թվականների ռազմավարական ծրագրի «Հետազոտությունների գերազանցության խթանում» ռազմավարական նպատակի «Մարդկային ներուժի զարգացում և պահպանում» միջոցառման «Գլոբալ տաղանդների ներգրավման ծրագրի իրականացում» կետի իրականացմանը:

1.4. **Մրցույթն** իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառներով և մասնագիտություններով *(**Հավելված N 2.1**)*:

1.5. **Մրցույթին** մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ (այսուհետ՝ **Հայտ**), որը ներառում է գիտական նախագիծ (այսուհետ՝ **Նախագիծ**) և պահանջվող այլ փաստաթղթեր/տվյալներ:

1.6. **Նախագիծը** ***(Հավելված N 2.2)*** պետք է լինի հավակնոտ, խոստումնալից և իրագործելի:

1.7. **Մրցույթի** շրջանակներում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված հրապարակում է (այսուհետ՝ **ՄԳՇ հրապարակում**) համարվում Վեբ օֆ Սայնս (Web of Science™) հարթակի հիմնական շտեմարանում (Web of Science Core Collection) կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում ընդգրկված հոդվածը (article), ակնարկը (review), նամակը (letter), գիտաժողովի նյութը (Conference Paper, Procedings Paper) կամ գրքի գլուխը (book chapter), իսկ մենագրությունը (այսուհետ՝ **Մենագրություն**) պետք է ունենա առնվազն հինգ տպագրական մամուլ ծավալ և որպես գիրք տեսակի փաստաթուղթ (Book) ինդեքսավորված լինի Վեբ օֆ Սայնս (Web of Science™) կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում:

1.8. **Մրցույթի** հրավերի փաթեթը սահմանում է դրան դիմելու ընթացակարգը, չափանիշները, **Հայտերի** գնահատման փուլերը և շահառու **Հայտերի** ֆինանսավորման ու հաշվետվողականության ընթացակարգը:

2. Նպատակը

2.1. **Մրցույթի** նպատակներն են.

- խթանել գիտության ոլորտում միջազգային համագործակցությունը,
- զարգացնել բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող կազմակերպությունում (այսուհետ՝ **Կազմակերպություն**) գիտական ներուժը,
- ներգրավել կարիերայի տարբեր մակարդակներում գտնվող սփյուռքի և արտերկրի հետազոտողների,
- բարելավել գիտական միջավայրը,
- հիմք դնել նոր, մրցունակ և հեռանկարային գիտական ուղղությունների ստեղծմանը:

3. Ժամկետները

3.1. **Նախագծի** իրականացման տևողությունը 24 ամիս է:

3.2. **Մրցույթին** դիմելու վերջնաժամկետը 2026 թվականի ապրիլի 23-ն է: **Կոմիտեի** հայտերի ընդունման առցանց համակարգում (postdoc-armenia-2026.hesc.am,

այսուհետ՝ **Համակարգ**) **Հայտերի** ուղարկման հնարավորությունը կարգելափակվի Երևանի ժամանակով ժամը 18:00-ին:

3.3. Թղթային տարբերակով **Կազմակերպության** ներկայացուցչի կողմից **Կոմիտե** ներկայացվող փաստաթղթերի վերջնաժամկետը 2026 թվականի ապրիլի 30-ն է:

3.4. **Մրցույթի** արդյունքում ֆինանսավորման երաշխավորված **Նախագծերի** ֆինանսավորման մեկնարկը նախատեսվում է 2026 թվականի սեպտեմբեր ամսից:

3.5. **Նախագծերի** ֆինանսավորման համար պայմանագրերը կնքվում են **Մրցույթի** արդյունքները հրապարակելուց հետո:

3.6. Հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետն է ֆինանսավորման մեկնարկից հետո յուրաքանչյուր 12-րդ ամսվա վերջին աշխատանքային օրը:

3.7. **Նախագիծն** իրականացվում է պայմանագրում նշված ժամկետներում:

4. Հայտատուն

4.1. **Հայտը** ներկայացնում է **Մրցույթի** մասնակիցը (այսուհետ՝ **Հայտատու),** ով մշակում է **Նախագիծը**:

4.2. Ֆինանսավորման երաշխավորված **Հայտի Հայտատուն** (այսուհետ՝ **Շահառու**) **Նախագծի** իրականացման ընթացքում պետք է հանդիսանա Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ ռեզիդենտ, ինչպես նաև բնակվի Հայաստանի Հանրապետությունում:

4.3. **Հայտատուն** կարող է լինել այն անձը, ով՝

- ծնվել է 1986 թվականի հունվարի 1-ից հետո,
- գիտական աստիճանը ստացել է 2011 թվականի հունվարի 1-ից հետո,
- **Հայտերի** առցանց ընդունման վերջնաժամկետին (2026 թվականի ապրիլի 23) նախորդող 4 տարիների ընթացքում գումարային 12 ամիս և ավելի Հայաստանի Հանրապետությունում չի ուսումնառել կամ աշխատել (բացառությամբ «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia»» ծրագրի շրջանակներում իրականացվող նախագծերի ղեկավարների):

4.4. Սույն հրավերի **«4.3.»** ենթակետում նշված տարիքային շեմը կարող է բարձրանալ՝

- զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ 2 տարով,
- երեխայի խնամքի արձակուրդում գտնված լինելու դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար 1 տարով:

4.5. **Հայտատուն** «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia»» ծրագրի շահառու կարող է լինել առավելագույնը երկու անգամ:

4.6. Հայտատուն **Մրցույթին** կարող է ներկայացնել մեկ հայտ:

4.7. Մրցույթն անցկացվում է երեք ենթածրագրերով՝

- առաջին ենթածրագիր (կրտսեր գիտաշխատող)՝ **Հայտատուն** վերջին 5 տարիների համար (2021-2026 թթ.) պետք է ներկայացնի՝

  Հավելված 2.1 -ի «1-5» բնագավառների մասնագիտություններով.

  - առնվազն 2 գիտական հրապարակում **ՄԳՇ**-ում:

  Հավելված 2.1-ի «6» բնագավառի մասնագիտություններով.

  - առնվազն 1 գիտական հրապարակում **ՄԳՇ**-ում,

  կամ

  - առնվազն 1 **Մենագրություն:**

- երկրորդ ենթածրագիր (գիտաշխատող)՝ **Հայտատուն** վերջին 5 տարիների համար (2021-2026 թթ.) պետք է ներկայացնի՝

  Հավելված 2.1 -ի «1-5» բնագավառների մասնագիտություններով.

  - առնվազն 4 գիտական հրապարակում **ՄԳՇ**-ում:

  Հավելված 2.1-ի «6» բնագավառի մասնագիտություններով.

  - առնվազն 2 գիտական հրապարակում **ՄԳՇ**-ում,

    կամ

  - առնվազն 1 **Մենագրություն:**

- երրորդ ենթացրագիր (ավագ գիտաշխատող)՝ **Հայտատուն** վերջին 5 տարիների համար (2021-2026 թթ.) պետք է ներկայացնի՝

  Հավելված 2.1 -ի «1-5» բնագավառների մասնագիտություններով.

  - առնվազն 6 գիտական հրապարակում **ՄԳՇ**-ում, որից առնվազն 3-ում պետք է լինի առաջին, վերջին կամ նամակագրություն պահող հեղինակ:

  Հավելված 2.1-ի «6» բնագավառի մասնագիտություններով.

  - առնվազն 3 գիտական հրապարակում **ՄԳՇ**-ում, որից առնվազն 2-ում պետք է լինի առաջին, վերջին կամ նամակագրություն պահող հեղինակ,

    կամ

  - առնվազն 1 **Մենագրություն:**

***Հավելված 2.1*-ի «6» բնագավառի մասնագիտությունների համար 1 Մենագրությունը համարժեք է ՄԳՇ-ում ընդգրկված 4 գիտական հրապարակման:**

4.8. **Հայտատուն** պետք է ունենա մենթոր՝ ով հանդիսանում է ընդունող **Կազմակերպության** աշխատակից (այսուհետ՝ Մենթոր): **Մենթորն** աջակցություն է ցուցաբերում **Նախագծի** իրականացման ընթացքում գիտական և կազմակերպչական հարցերում:

5. Մենթորը

5.1. **Մենթոր** կարող է լինել այն անձը, ով՝

- **Կազմակերպությունում** զբաղեցնում է առաջատար գիտաշխատողի կամ գլխավոր գիտաշխատողի կամ պատվավոր առաջատար գիտաշխատողի կամ պատվավոր գլխավոր գիտաշխատողի կամ գիտական խմբի/ստորաբաժանման ղեկավարի պաշտոն,

5.2. **Մենթորի** համար աշխատանքի վարձատրություն չի նախատեսվում:

5.3. **Մենթորը Հայտատուին** է տրամադրում մասնագիտական ինքնակենսագրությունը (CV) և հաստատող նամակը (Confirmation Letter), որով հավաստում է, որ ծանոթ է **Նախագծի** բովանդակությանը և իր գործառույթների շրջանակին:

6. Կազմակերպությանը ներկայացվող պահանջները

6.1. **Կազմակերպությունը** պետք է լինի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագիր իրականացնող:

6.2. **Կազմակերպությունը, Նախագծի** իրականացման ընթացքում, ապահովում է **Հայտատուի** հասանելիությունը առկա ենթակառուցվածքներին և սարքավորումներին:

6.3. **Կազմակերպությունը** աջակցում է **Նախագծի** իրականացմանը:

6.4. **Կազմակերպությունը Հայտատուին** տրամադրում է **Կազմակերպության** գիտական ուղղություններին (ռազմավարությանը) **Նախագծի** համապատասխանությունը, կարևորությունը և արդիականությունը հիմնավորող՝ **Կազմակերպության** (բուհի ֆակուլտետի) գիտական խորհրդի եզրակացություն (Board Conclusion):

6.5. **Կազմակերպությունը Նախագծի** իրականացման մինչև 3 ամիս լրանալը, առնվազն **Նախագծի** իրականացման ամբողջ ընթացքի համար, **Հայտատուին** ներառում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրում:

6.6. **Կազմակերպության** ղեկավարը **Հայտատուին** տրամադրում է տեղեկանք, որ ծանոթ է **Մրցույթի** հրավերի պայմաններին, չի առարկում **Մենթորի** ներգրավվածությանը և պատրաստ է **Նախագծի** ֆինանսավորման պարագայում **Կազմակերպության** բազային ֆինանսավորման ֆինանսական միջոցներով ապահովել սույն հրավերի **«6.5.»** ենթակետով նախատեսված պայմանը:

6.7. Ծախսերի նախահաշվի (այսուհետ՝ **Նախահաշիվ**), «Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով նախատեսված ֆինանսական միջոցներով **Կազմակերպությունը** ստեղծում է **Նախագծի** իրականացման համար անհրաժեշտ պայմաններ:

6.8. **Նախագծի** իրականացման համար անհրաժեշտ սարքերը, նյութերը և ծառայությունները ձեռք են բերվում «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

6.9. Ձեռք բերված սարքերն ու սարքավորումները ներառվում են **Կազմակերպության** հաշվեկշռում, տնօրինման իրավունքը պատկանում է **Կազմակերպությանը՝** հետագայում ևս կանոնադրական նպատակներով օգտագործման (գիտական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման) համար:

6.10. **Նախագիծը** ֆինանսավորման երաշխավորվելուց հետո **Կազմակերպության, Կոմիտեի** և **Շահառուի** միջև կնքվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային ֆինանսավորման շրջանակներում հետազոտական նախագծերի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր (այսուհետ՝ **Պայմանագիր**):

7. Ակնկալվող արդյունքները

7.1. **Նախագծի** ավարտին **Շահառուն** պետք է ներկայացնի.

- առաջին ենթածրագրի համար.

  Հավելված 2.1 -ի «1-5» բնագավառների մասնագիտություններով.

- առնվազն 2 գիտական հրապարակում **ՄԳՇ**-ում:

Հավելված 2.1-ի «6» բնագավառի մասնագիտություններով.

- առնվազն 1 գիտական հրապարակում **ՄԳՇ**-ում,

  կամ

- առնվազն 1 **Մենագրություն**:

- երկրորդ ենթածրագրի համար.

Հավելված 2.1 -ի «1-5» բնագավառների մասնագիտություններով.

- առնվազն 3 գիտական հրապարակում **ՄԳՇ**-ում:

Հավելված 2.1-ի «6» բնագավառի մասնագիտություններով.

- առնվազն 2 գիտական հրապարակում **ՄԳՇ**-ում,

  կամ

- առնվազն 1 **Մենագրություն**:

- երրորդ ենթածրագրի համար.

Հավելված 2.1 -ի «1-5» բնագավառների մասնագիտություններով.

- առնվազն 4 գիտական հրապարակում **ՄԳՇ**-ում:

Հավելված 2.1-ի «6» բնագավառի մասնագիտություններով.

- առնվազն 2 գիտական հրապարակում **ՄԳՇ**-ում,

  կամ

- առնվազն 1 **Մենագրություն**:

ՄԳՇ հրապարակումները պետք է լինեն առնվազն Q3 քառորդին համարժեք SJR ինդեքս (SCImago Journal Rank Indicator) ունեցող պարբերականներում: Առնվազն 1 գիտական հրապարակում պետք է լինի **Մենթորի** համահեղինակությամբ:

7.2. **Նախագծի** շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները հրապարակելիս անհրաժեշտ է որպես **Հայտատուի** աշխատավայր (affiliation) նշել **Կազմակերպությունը** և **Կոմիտեի** կողմից ստացած աջակցության մասին.

- *The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA (Research project № _____).*

Ուշադրություն. Համապատասխան նշումների բացակայության դեպքում հրապարակումը չի համարվի Նախագծի իրականացման արդյունք, հետևաբար՝ հաշվի չի առնվի հաշվետվության մեջ:

7.3. **Նախագծի** իրականացման ընթացքում **Հայտատուն** և **Մենթորը** պետք է ապահովեն **Նախագծի** կամ գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ

գիտահանրամատչելի նյութերի ստեղծում և հանրայնացում (հարցազրույցներ, սոցիալական ցանցերով **Ծրագրի** վերաբերյալ գրառումներ, գիտահանրամատչելի ամսագրերում հրապարակումներ, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն), որոնք հաշվի կառնվեն ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն տալիս:

7.4. Սույն հրավերի **«7.1.»** ենթակետով նշված պայմանը չկատարելը/կատարելը կանդրադառնա **Կոմիտեի** կողմից հետագայում հայտարարվող մրցույթներում **Հայտատուի, Մենթորի** ընդգրկմամբ հայտի գնահատականի վրա՝ դրանից հանելով/գումարելով տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի 5 տոկոսի չափով միավոր: Հետագա մրցույթներին ներկայացվելիք հայտի գնահատականի նվազեցումը կչեղարկվի սույն հրավերի **«7.1.»** ենթակետով նշված պայմանները բավարարելու մասին **Կոմիտե** ներկայացված տեղեկատվության հիման վրա:

II. ՀԱՅՏԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

8. Հայտ և անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելը

8.1. **Հայտը** լրացնում և ներկայացնում է **Հայտատուն՝ Համակարգի** (postdoc-armenia-2026.hesc.am) միջոցով: **Հայտի** ուղարկման վերջնաժամկետը 2026 թվականի ապրիլի 23-ն է (**Հայտերի** ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

8.2. **Համակարգի** միջոցով ներկայացվող **Հայտը** պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը.

- **Հայտատուի** դիմումը (***Հավելված N 2.3***),
- **Նախահաշիվը**,
- գիտական խորհրդի համապատասխան եզրակացությունը (Board Conclusion),
- **Կազմակերպության** ղեկավարի՝ սույն հրավերի «**6.6.**» ենթակետով պահանջվող տեղեկանքը,
- **Մենթորի** մասնագիտական ինքնակենսագրությունը (CV) և հաստատող նամակը (Confirmation Letter),
- **Հայտատուի** մասնագիտական ինքնակենսագրությունը (CV),

- տարիքային շեմը բարձրացնելու համար՝ զինվորական գրքույկի պատճենը կամ երեխայի խնամքի արձակուրդի մասին համապատասխան փաստաթղթի պատճենը:

8.3. Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել այլ փաստաթղթեր:

8.4. **Կազմակերպության** ներկայացուցիչը (գիտական քարտուղար կամ այլ պատասխանատու անձ) մինչև 2026 թվականի ապրիլի 30-ը ներառյալ, մեկ ընդհանուր փաթեթով, **Կազմակերպության** ղեկավարի գրությամբ (***Հավելված 2.4***), աշխատանքային ժամերին առձեռն **Կոմիտե** է ներկայացնում **Կազմակերպության** կողմից ներկայացված յուրաքանչյուր **Հայտի Հայտատուի** դիմումը և **Նախահաշիվը** (Օրբելի եղբայրների փողոց 22, 8-րդ հարկ, 805 սենյակ):

8.5. **Մրցույթի** վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն և խորհրդատվություն կարելի է ստանալ **Կոմիտեից,** հեռախոս՝ (010) 300109 (ներքին 830), էլեկտրոնային փոստ՝ grants@hesc.am:

Ուշադրություն. Կոմիտեն քննարկման է ընդունում միայն Համակարգի կողմից գեներացված Հայտերը: Հայտերը, որոնք չեն ուղարկվել վերը նշված ընթացակարգով և ժամկետներում, քննարկման ենթակա չեն:

9. Նախահաշվի կազմությունըՆախահաշիվը կազմված է «Աշխատանքի վարձատրություն» և «Այլ ծախսեր» հոդվածներից: «Այլ ծախսեր» հոդվածը բաղկացած է «Սարքեր, նյութեր և ծառայություններ», «Գործուղումներ» և «Վերադիր ծախսեր» ենթահոդվածներից:

9.2. **Նախագծի** ֆինանսավորման առավելագույն չափը կարող է լինել.

- առաջին ենթածրագրի համար՝ 10,200.0 հազար (տաս միլիոն երկու հարյուր հազար) դրամ,
- երկրորդ ենթածրագրի համար՝ 12,600.0 հազար (տասներկու միլիոն վեց հարյուր հազար) դրամ,
- երրորդ ենթածրագրի համար՝ 15,000.0 հազար (տասնհինգ միլիոն) դրամ:

վերոնշյալ գումարը կարող է ավելանալ սույն հրավերի **«9.4.»** ենթակետում նշված գումարի չափով:

9.3. **Նախահաշվի** «Աշխատանքի վարձատրություն» հոդվածում **Հայտատուի** աշխատանքի ամսական վարձատրության չափն (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները) ընդունել առաջին ենթածրագրի համար մինչև 300.0 հազար (երեք հարյուր հազար) դրամ, երկրորդ ենթածրագրի համար մինչև 400.0

հազար (չորս հարյուր հազար) դրամ, երրորդ ենթածրագրի համար մինչև 500.0 հազար (հինգ հարյուր հազար) դրամ:

9.4. Ընտանիքի անդամ(ներ)ը Հայաստանի Հանրապետություն տեղափոխվելու դեպքում սույն հրավերի **«9.3.»** ենթակետով նախատեսված աշխատանքի վարձատրության (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները) չափին լրացուցիչ ավելանում է՝ ամուսնու դեպքում՝ 150.0 (մեկ հարյուր հիսուն) հազար ՀՀ դրամ և յուրաքանչյուր անչափահաս երեխայի դեպքում 100.0 (մեկ հարյուր) հազար ՀՀ դրամ, բայց գումարային ոչ ավել քան 400.0 (չորս հարյուր) հազար ՀՀ դրամ: Սույն ենթակետը գործում է նաև Հայաստանի Հանրապետություն տեղափոխվելուց հետո ամուսնության և երեխայի ծնունդի դեպքում: Այդ նպատակով **Շահառուն** դիմում է **Կոմիտե**՝ ներկայացնելով հավաստող փաստաթղթերը, և կնքվում է **Պայմանագրի** անբաժանելի մաս կազմող համաձայնագիր, որով ամրագրվում է **Պայմանագրի** գնի փոփոխությունը:

9.5. Աշխատանքի վարձատրության գումարը սույն հրավերի **«9.3.»** և **«9.4.»** ենթակետերում նշված չափից պակաս նախատեսելու դեպքում՝ տարբերությունը կարող է օգտագործվել **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածում:

9.6. Ընտանիքի անդամ(ներ)ի հետ Հայաստանի Հանրապետություն տեղափոխվելու դեպքում **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթահոդվածում կարող է նախատեսվել «Տեղափոխման միանվագ գումար» (Settling-in) մինչև 1,000.0 հազար (մեկ միլիոն) դրամ (տոմսի փոխհատուցում, բնակարանի կանխավճար և այլն):

9.7. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ», «Գործուղումներ» և «Վերադիր ծախսեր» ենթահոդվածներով 24 ամսվա համար կարելի է նախատեսել մինչև 3,000.0 հազար (երեք միլիոն) դրամ: Այս գումարը կարող է ավելանալ սույն հրավերի **«9.3.» և «9.4.»** ենթակետում նշված տարբերության չափով:

9.8. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով (24 ամսվա համար) կարող է նախատեսվել մինչև 300.0 հազար (երեք հարյուր հազար) դրամ:

9.9. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթահոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի կամ ծառայությունների

ձեռքբերման ծախսեր: Ծառայությունների մատուցման պայմանագիր կարող է կնքվել միայն իրավաբանական անձանց հետ՝ նախապես համաձայնեցնելով **Կոմիտեի** հետ:

9.10. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Գործուղումներ» ենթահոդվածով նախատեսվող գումարը կարող է օգտագործվել **Նախագծի** իրականացման, ընթացքի ու արդյունքների ներկայացման նպատակով միջազգային գիտաժողովներին **Շահառուի** մասնակցության համար:

9.11. Գործուղումների օրապահիկը և գիշերավարձը հաշվարկելիս անհրաժեշտ է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ:

9.12. **Նախահաշվի** բոլոր ենթահոդվածների ծախսերը պետք է հիմնավորել **Նախահաշվի** մեկնաբանության մեջ:

9.13. **Հայտի** քննարկման ընթացքում **Նախահաշվի** հիմնավորվածությունը և բաշխումը կարող են լրամշակվել **Հայտատուի** համաձայնությամբ:

III. ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

10. Հայտերի համապատասխանությունը Մրցույթի պայմաններին

10.1. **Կոմիտեն** ստուգում է.

- **Հայտերի** համապատասխանությունը **Մրցույթի** հրավերի պայմաններին,
- **Հայտում** սույն հրավերի **«4.7.»** ենթակետում նշված ենթածրագրի և ներկայացված հրապարակումների համապատասխանությունը:

10.2. **Հայտը** չի քննարկվում, եթե՝

- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- չի բավարարում **Մրցույթի** հրավերի պայմաններին,
- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ այլ նախագծի հետ:

10.3. Ստուգման արդյունքները տրամադրվում են **Հայտերի** երաշխավորման ու հաշվետվությունների ընդունման նպատակով ձևավորված հանձնաժողովին (այսուհետ՝ **Հանձաժողով**):

10.4. **Հանձնաժողովը** քննարկում և հաստատում է փորձաքննության ենթակա **Հայտերի** ցանկը: Ընտրված ենթածրագրի և ներկայացված հրապարակումների ոչ բավարար լինելու դեպքում **Հանձնաժողովն** իրավունք ունի փոփոխել ենթածրագիրը՝

առաջարկելով ներկայացված հրապարակումների քանակին համապատասխան ենթածրագիր, նախապես համաձայնեցնելով **Հայտատու** հետ:

10.5. **Մրցույթի** պայմաններին չհամապատասխանող **Հայտը** փորձաքննության փուլ չի անցնում, որի մասին **Հայտատուն** տեղեկացվում է էլեկտրոնային եղանակով:

11. Փորձաքննությունը

11.1. **Հանձնաժողովը Կոմիտեի** հետ համատեղ մշակում ու հաստատում է **Հայտերի** փորձաքննության առաջին և երկրորդ փուլերի գնահատման թերթիկները և վարման ընթացակարգը:

11.2. Փորձաքննության առաջին փուլում **Հանձնաժողովը** գնահատում է **Նախագծի** ընդարձակ ամփոփագիրը (***Հավելված 2.5***) և **Հայտում** ներառված այլ փաստաթղթերը/տվյալները :

11.3. Փորձաքննության երկրորդ փուլում **Հանձնաժողովը** գնահատում է **Հայտը՝ Նախագիծը** և անցկացնում է հարցազրույց **Հայտատուի** հետ:

11.4. **Կոմիտեի, Հանձնաժողովի** և փորձագետների կողմից **Հայտի** բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի 40-րդ հոդվածի 12-րդ մասի 7-րդ կետով սահմանված դրույթների:

12. Փորձաքննության առաջին փուլը (ընդարձակ ամփոփագրի գնահատում)

12.1. Փորձաքննության առաջին փուլում **Հանձնաժողովը**, հաշվի առնելով **Նախագծի** ընդարձակ ամփոփագիրը, **Հայտատուի** գիտական հետագիծը (track record), մասնագիտական ինքնակենսագրությունը (CV), **Կազմակերպության** և **Մենթորի** համապատասխանությունը **Նախագծի** նպատակներին, **Նախագծի** համապատասխանությունը Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնոլոգիաների ոլորտների զարգացման 2026-2030 թվականների գերակա ուղղություններին, կոնսենսուսի սկզբունքով ձևավորում է առաջին փուլը հաղթահարած **Հայտերի** ցանկը, որոնք անցնում են փորձաքննության երկրորդ փուլ:

12.2 Փորձաքննության առաջին փուլը չհաղթահարած **Հայտը** երկրորդ փուլ չի անցնում, որի մասին **Հայտատուն** տեղեկացվում է էլեկտրոնային եղանակով:

13. Փորձաքննության երկրորդ փուլը (Հանձնաժողովի գնահատում)

13.1. Փորձաքննության երկրորդ փուլում **Հանձնաժողովը** գնահատում է **Հայտը՝** հաշվի առնելով **Նախագծի**.

- գիտական և գիտատեխնիկական նորույթն ու արդիականությունը,
- իրականացման նախադրյալները, փուլերն ու ժամկետները,
- ազդեցությունը ոլորտի զարգացման վրա, հեռանկարը,
- **Հայտատուի** միջազգային համագործակցության փորձը,
- պահանջվող ֆինանսական միջոցների հիմնավորվածությունը,
- **Կազմակերպության** համապատասխանությունը **Նախագծի** նպատակներին,
- **Նախագծի** գիտական ուղղության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնոլոգիաների ոլորտների զարգացման 2026-2030 թվականների գերակա ուղղություններին,
- **Մրցույթի** առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

13.2. Մասնագիտական կարծիք ստանալու համար **Հանձնաժողովը** կարող է ներգրավել տվյալ մասնագիտության անկախ փորձագետի:

13.3. Յուրաքանչյուր **Հայտի** համար **Հանձնաժողովը** լրացնում է փորձաքննության գնահատման թերթիկ:

13.4. **Հանձնաժողովի** առավելագույն գնահատականը կազմում է **Հայտի** առավելագույն գնահատականի 50 տոկոսը:

14. Փորձաքննության երկրորդ փուլը (հարցազրույց)

14.1. **Հանձնաժողովն** անցկացնում է հարցազրույց **Հայտատուի** հետ:

14.2. Յուրաքանչյուր **Հայտի** համար **Հանձնաժողովի** անդամը լրացնում է հարցազրույցի գնահատման թերթիկ:

14.3. Հարցազրույցի առավելագույն գնահատականը կազմում է **Հայտի** առավելագույն գնահատականի 50 տոկոսը:

15. Գնահատման արդյունքները

15.1. **Հայտի** փորձաքննության երկրորդ փուլի արդյունքում ձևավորված գնահատականը հանձնաժողովի գնահատականի և հարցազրույցի գնահատականների միջին թվաբանականի գումարն է:

15.2. Փորձաքննության երկրորդ փուլի արդյունքների հիման վրա, **Հայտերի** վերջնական գնահատականների նվազման կարգով, ըստ գիտության բնագավառների (մասնագիտությունների)՝ **Կոմիտեն** ձևավորում է վարկանիշային ցանկ ու ներկայացնում **Հանձնաժողովին**:

15.3. **Հանձնաժողովը** հաստատում է **Հայտերի** գնահատականների վարկանիշային ցանկը և **Կոմիտեին** առաջարկում գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի (մասնագիտության) շեմային գնահատականը:

15.4. **Կոմիտեն**, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական դրամաշնորհային ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափից, որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի (մասնագիտության) շեմային գնահատականը և **Նախարարի** հաստատմանն է ներկայացնում **Նախագծերի** ցանկը և յուրաքանչյուր **Նախագծի** իրականացման համար նախատեսվող ֆինանսավորման չափը:

15.5. **Նախարարի** հրամանով հաստատվում է ֆինանսավորման երաշխավորված **Նախագծերի** ցանկը և յուրաքանչյուր **Նախագծի** իրականացման համար նախատեսվող ֆինանսավորման չափը:

15.6. **Մրցույթի** արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված **Նախագծերի** ցանկը հրապարակվում է **Կոմիտեի** պաշտոնական կայքում:

15.7. **Կոմիտեն Կազմակերպության** ղեկավարին տրամադրում է տեղեկություններ՝ տվյալ **Կազմակերպությունից Մրցույթի** շահառու **Հայտերի** վերաբերյալ:

15.8. **Կոմիտեն Հայտատուներին** տրամադրում է **Հայտի** փորձաքննության արդյունքները և անցողիկ շեմային գնահատականը:

IV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

16. Պայմանագրերի կնքումը

16.1. **Կոմիտեի**, **Կազմակերպության** և **Շահառուի** միջև կնքվում է **Պայմանագիր**:

16.2. Ամսական վարձատրությունն ապահովելու համար, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով **Կազմակերպության** և **Շահառուի** միջև կնքվում է պայմանագիր, որի պատճենը

Կազմակերպության ներկայացուցիչը (գիտական քարտուղար կամ այլ պատասխանատու անձ) ներկայացնում է **Կոմիտե:**

16.3. **Նախագծերի** ֆինանսավորման համար պայմանագրերը կնքվում են **Մրցույթի** արդյունքները հրապարակելուց հետո:

16.4. **Նախագծերը** իրականացվում են **Պայմանագրերում** նշված ժամկետներում:

17. Հաշվետվությունը

17.1. **Նախագծի** իրականացման մասին **Շահառուն** կազմում է ընթացիկ և ամփոփիչ հաշվետվություններ և ներկայացնում է **Կոմիտե**:

17.2. Ընթացիկ հաշվետվությունը ներկայացվում է **Նախագծի** իրականացման ժամկետի սկզբից հաշված 12-րդ ամսվա վերջին աշխատանքային օրը, իսկ ամփոփիչ հաշվետվությունը՝ **Նախագծի** իրականացման վերջին ամսվա վերջին աշխատանքային օրը:

17.3. Սույն հրավերի «**9.4.**» ենթակետում նշված պայմանով լրացուցիչ ֆինանսավորման դեպքում յուրաքանչյուր ընթացիկ հաշվետվության մեջ պետք է ներկայացնել հավաստող փաստաթղթեր (հաշվառման հասցեի վերաբերյալ տեղեկություն, տեղեկանք ուսման վայրից, տեղեկանք բնակության վայրից, անձնագրի բոլոր էջերի պատճեներ և այլն), որոնք տրամադրվում են **Հանձնաժողովին՝** հետագա լրացուցիչ ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացության համար:

17.4. **Կոմիտեն Հաշվետվությունները** ներկայացնում է **Հանձնաժողովին**: **Հանձնաժողովը** քննարկում է **Հաշվետվությունները** և **Կոմիտե** է ներկայացնում **Նախագծի** հետագա ֆինանսավորման նպատակահարմարության (ընթացիկ հաշվետվություն) կամ ընդունման (ամփոփիչ հաշվետվություն) մասին առաջարկություն, ինչպես նաև **Պայմանագրի** գնի նվազեցման առաջարկ՝ «**17.3»** ենթակետի փաստաթղթերի բացակայության դեպքում:

17.5. **Հանձնաժողովի** առաջարկության հիման վրա **Կոմիտեն** որոշում է ընդունում **Նախագծի** հետագա ֆինանսավորման, ֆինանսավորման կրճատման կամ դրա դադարեցման մասին:

17.6. Գիտության համակարգի գործունեության որակի և արդյունավետության գնահատման նպատակով, սահմանված կարգով, **Կոմիտեն** կարող է

իրականացնել **Նախագծի** ընթացիկ մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել **Հանձնաժողովին**:

17.7. **Նախագծի** ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացություն տալիս՝ **Հանձնաժողովը** պետք է հաշվի առնի նաև **Կոմիտեի** իրականացրած մշտադիտարկման արդյունքները:

17.8. **Կոմիտեն** կարող է ֆինանսավորման երաշխավորված **Նախագծի** անոտացիան և հաշվետվությունները հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

18. Լրացուցիչ տեղեկություններ

18.1. Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող հայտ և այնուհետև հաշվետվություն ներկայացնելու դեպքում պետք է առաջնորդվել «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:

18.2. **Շահառուն** կարող է դիմել **Կոմիտե Պայմանագրի** նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի ենթահոդվածներով տվյալ բյուջետային տարվա համար նախատեսված ծախսերի վերաբաշխում կատարելու միջնորդությամբ՝ ներկայացնելով համապատասխան ձևաթղթով հիմնավորում և ստանալով **Կոմիտեի** գրավոր համաձայնությունը: Վերաբաշխում կատարելու դեպքում կնքվում է **Պայմանագրի** անբաժանելի մաս կազմող համաձայնագիր (այսուհետ՝ **Համաձայնագիր**)՝ **Պայմանագրում** փոփոխությունն ամրագրելու համար, ինչպես նաև **Կոմիտե** է ներկայացվում **Պայմանագրի** նախահաշվի փոփոխված տարբերակը:

18.3. **Շահառուն** կարող է դիմել **Կոմիտե Մենթորի** համարժեք փոփոխություն կատարելու միջնորդությամբ՝ **Կոմիտե** ներկայացնելով հիմնավորում և ստանալով **Կոմիտեի** գրավոր համաձայնությունը:

18.4. **Շահառուի**՝ Հայաստանի Հանրապետությունից 12 ամսվա ընթացքում երկու ամսից ավելի անընդմեջ բացակայելով հանդերձ **Նախագծում** աշխատանքները չդադարեցնելու համար դեպքերը անհրաժեշտ է նախապես գրավոր համաձայնեցնել **Կոմիտեի** հետ:

18.5. Նախագծի հաջող ավարտից հետո **Շահառուն** հնարավորություն կունենա դիմել նաև Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրման մրցույթին:

19. Նախագծի ֆինանսավորման դադարեցումը

Կոմիտեն կարող է դադարեցնել **Նախագծի** ֆինանսավորումը, եթե.

- սահմանված ժամկետում **Նախագծի** իրականացման մասին ընթացիկ հաշվետվություն չի ներկայացվել,
- **Նախագծի** հետագա ֆինանսավորման նպատակահարմարության վերաբերյալ **Հանձնաժողովի** կողմից բացասական եզրակացություն է տրվել,
- առանց **Կոմիտեի** գրավոր համաձայնության **Պայմանագրի** նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում կատարվել է գումարի վերաբաշխում,
- առանց **Կոմիտեի** գրավոր համաձայնության կատարվել է Մենթորի փոփոխություն,
- առանց **Կոմիտեի** գրավոր համաձայնության **Շահառուն** 12 ամսվա ընթացքում երկու ամսից ավելի անընդմեջ բացակայել է Հայաստանի Հանրապետությունից,
- չի կատարվել սույն հրավերի **«6.5.»** ենթակետում նշված պայմանը, ընդ որում՝ այն կանդրադառնա **Կազմակերպությունից Կոմիտե** ներկայացված հայտերի վրա՝ հետագա ծրագրի համար ստեղծված համապատասխան հանձնաժողովի եզրակացությամբ որոշված չափով:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	***4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
1.1 Մաթեմատիկա	4.1 Անասնաբուծություն, անասնաբուժություն
1.2 Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ	4.2 Բուսաբուծություն
1.3 Ֆիզիկա և աստղագիտություն	4.3 Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն
1.4 Քիմիա	4.4 Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա
1.5 Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ	***5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
1.6 Կենսաբանական գիտություններ	5.1 Հոգեբանություն
2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ	5.2 Տնտեսագիտություն և գործարարություն
2.1 Քաղաքաշինություն և ճարտարապետություն	5.3 Մանկավարժական գիտություններ
2.2 էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	5.4 Սոցիոլոգիա
2.3. Մեխանիկա	5.5 Իրավունք
2.4 Մեքենագիտություն և մեքենաշինություն	5.6 Քաղաքական գիտություններ
2.5 Քիմիական տեխնոլոգիաներ	5.7 Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն
2.6 Նյութագիտություն	5.8 Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն
2.7 Բժշկական սարքաշինություն	***6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
2.8 Էկոլոգիա	6.1 Պատմություն, հնագիտություն
2.9 Կենսատեխնոլոգիա	6.2 Լեզվագիտություն, գրականագիտություն
2.10 Նանոտեխնոլոգիա	6.3 Փիլիսոփայություն, էթիկա
3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6.4 Աստվածաբանություն, կրոնագիտություն
3.1. Ընդհանուր բժշկություն	6.5 Արվեստագիտություն
3.2. Կլինիկական բժշկություն	
3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա	

Ն ա խ ա գ ի ծ

Ներկայացնել անգլերեն, մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. **Համառոտ բնութագիրը** (անոտացիա)

2. **Հետազոտական խնդրի վերաբերյալ գիտելիքների ներկա վիճակի մասին վերլուծությունը**

3. **Նախագծի նպատակները և խնդիրները**

4. **Հետազոտական նախագիծը**

5. **Նախագծի իրականացման գիտական մեթոդները**

6. **Օրացուցային պլանը** (ըստ եռամսյակների կամ Գանտի աղյուսակ)

7. **Միջազգային համագործակցության նախադրյալները**

8. **Ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները** (գիտական հոդվածներ, գիտաժողովների նյութեր և այլն), նորարարական կարողության օգտագործում (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն), միջազգային համագործակցային կապերի ամրապնդում, համագործակցության հեռանկարներ)

9. **Օգտագործված գրականության ցանկը**

Հավելված N 2.3
«Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia – 2026»» մրցույթի հրավերի

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ

_____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia - 2026» մրցույթին մասնակցության «_____» վերնագրով հայտը:

Դիմող՝ _____ (_____)
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

«____» _____ 202 թ.

Հավելված N 2.4 *
«Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia - 2026»» մրցույթի հրավերի

N _____ «____» _____ 202 թ.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հայոցյան,

Խնդրում եմ ընդունել «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia - 2026»» մրցույթին (Կազմակերպության անվանում)-ից ներկայացված _____ վերնագրերով հայտ(եր)ը:

Կազմակերպության ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

* *Հավելված N 2.4-ով առաջարկվող տեքստը ներկայացնել Կազմակերպության ձևաթղթով:*

Նախագծի վերնագիրը

Ընդարձակ ամփոփագիրը

Ընդարձակ ամփոփագիրը գնահատվում է փորձաքննության առաջին փուլում, անհրաժեշտ է ներկայացնել անգլերեն մինչև 2 էջ:

Ընդարձակ ամփոփագիրը պետք է լինի **Նախագծի** հակիրճ տարբերակը և շեշտադրի հետազոտության կարևորությունն ու նպատակահարմարությունը: